



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԱՑ-ԷՍ-2017/13-2

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ ուսումնասիրելով
ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10810-17 գրությամբ
«Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող
մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական
ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ
նաև՝ Պատվիրատու) 07.06.2017թ. թիվ ԴՎԱ/1708 գրության հիման վրա, 15.06.2017թ. թիվ
03/26-1/10810-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Զ-ին
գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում
(այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող
նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ
ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.06.2017թ. թիվ ԴՎԱ/1708 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել թվով երկու մասնակից՝ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն և «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ն: Վերջինս գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվեց 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որին սահմանված կարգով առաջարկվեց ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանարգեց, որ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայության հավաստում ներկայացված պայմանագիրը չի համարվում հրավերով որպես նմանատիպ սահմանված պայմանագիր և առաջարկեց շտկել անհամապատասխանությունը: Ծանուցմանն ի պատասխան՝ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի կողմից ուղարկվեց պարզաբանում՝ ներկայացված պայմանագրի նմանատիպության վերաբերյալ: Քննարկելով նշված պարզաբանումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան (ոչ նմանատիպ): Հիմք ընդունելով նշված հանգամանքը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայությանը հավաստելու համար ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ Անուշ Մաղաքյանը և Ալեքսան Կլազանցը:

3. «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ն 23.06.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մրցույթին մասնակցելու հայտի լրացման ժամանակ Հավելված 3.1-ում անկողնային պարագաների փոխարեն գրվել է հանդերձանք, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջանակային համաձայնագրի պայմանագրի անունը եղել է հանդերձանքի գնման պայմանագիր: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից առաջարկվել է, Հավելված 3.1-ում կատարել ճշտում: Մենք նույն պատճառաբանությամբ պատասխանել ենք, որ դա պայմանագրի անունն է և անկողնային պարագաները մտնում են հանդերձանքի մեջ: Միևնույն ժամանակ տեղյակ ենք պահել, որ հաղթող ճանաչվելու դեպքում մենք ներկայացնելու ենք, որպես նախկինում կատարված աշխատանքների հանդերձանքի մատակարարման փաստաթղթեր: Հանդերձանք ասելով մենք նկատի ենք ունեցել, ոչ թե անկողնային պարագաներ, այլ հենց զուտ հագուստ: ՀՀ պաշտպանության նախարարության հանձնաժողովն էլ կարծել է, որ ներկայացվելիք փաստաթղթերի մեջ հնարավոր է, որ լինի նաև անկողնային պարագաներ և ընդունել է մեր կեղմից ներկայացված Հավելված 3.1-ը նախկին ձևով:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր անհատ ձեռներեց Աշոտ Ազիզյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/13-2 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10810-17 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնափատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.05.2017թ. նիստի N 3 և 29.05.2017թ. նիստի N 4 արձանագրությունները, Ընկերության կողմից 23.06.2017թ. էլեկտրոնային գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ն ընթացակարգի 5-րդ և 6-րդ չաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանք է հանդիսանում «Բարձ՝ բամբակյա /Բարձ՝ սիտեպոնից/» ապրանքը, իսկ 6-րդ չափաբաժնով՝ «Վերմակներ՝ /Վերմակ (210x150)սմ/» ապրանքը:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է հանդերձանքի մատակարարում, որի ընդհանուր արժեքը կազմել է 7.002.000 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 04.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 2.3 կետով արձանագրվել է, որ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի 3.1 հավելվածում (հայտարարություն մասնագիտական փորձառության մասին) մասնակցի կողմից նշվել է, որ նախորդող տարիների, որպես նմանատիպ իրականացրել է հանդերձանքի մատակարարման պայմանագրեր, այնինչ ընթացակարգի հրավերով, որպես նմանատիպ է սահմանվել անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագրերը:

Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ծանուցմանն ի պատասխան սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը.

«Հանդերձանքը և անկողնային պարագաները, ըստ գնումների աջակցման կենտրոնի շրջանակային համաձայնագրերի ցանկի, մտնում են նույն խմբի մեջ և համարվում են նմանատիպ տնտեսական գործունեություն, որի արդյունքում չեն առանձնացվում հանդերձանք և անկողնային պարագաներ խմբերի և կնքվում է մի պայմանագիր: Մենք էլ հաշվի առնելով սույն փաստը 3.1 հավելվածը լրացրել ենք ըստ կնքված պայմանագրի անվանումի: Գտնում ենք, որ մեր կողմից ներկայացված 3.1 հավելվածը ձեզ ներկայացվել է օրենքից ելնելով:

Հաղթող ճանաչվելու դեպքում մենք կներկայացնենք, որպես նախկինում կատարված աշխատանքներ, հանդերձանքի մատակարարման պայմանագիր, որը բխում է օրենքից»:

Հանձնաժողովը քննարկելով Ընկերության պարզաբանումը, որոշել է Ընկերության կողմից ներկայացված N 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել՝ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ն:

Հանձնաժողովը 29.05.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը. «ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար որպես նմանատիպ էին սահմանված անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագրերն, այնինչ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել էր վերնաշապիկների և կոստյումների մատակարարման պայմանագիր, որը Հանձնաժողովի կողմից չգնահատվեց որպես հրավերով սահմանվածին նմանատիպ»:

Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը շտկել նշված անհամապատասխանությունը:

Ծանուցմանն ի պատասխան սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը.

«Ի պատասխան ձեր կողմից ուղարկված մասնագիտական փորձառության վերաբերյալ փաստաթղթերի անհամապատասխանությանը, հայտնում ենք, որ մենք պայմանագիր ենք կնքել Գնումների աջակցման կենտրոնի հետ հանդերձանքի շրջանակային համաձայնագրերով մրցույթներին մասնակցելու համար: Տվյալ պայմանագիրը ներառում է նաև անկողնային պարագաներ: Ուստի մենք մրցույթին մասնակցել ենք հենց այդ հիմնավորմամբ, որն ըստ մեզ օրենքի խախտում չի և իրավունք ունեինք, որպես նախկին կատարած աշխատանքներ ներկայացնել այն, ինչը մեր կողմից ներկայացվել է, որպես մասնագիտական փորձառության մասին հայտարարության հիմք: Կոնկրետ անկողնային պարագաների մատակարարման վերաբերվող փաստաթղթեր չունենք»:

Հանձնաժողովը քննարկելով Ընկերության պարզաբանումը, որոշել է վերջինիս կողմից որպես «Մասնագիտական փորձառության» առկայության հավաստում ներկայացրած

պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան (ոչ նմանատիպ) և Ընկերության կողմից ներկայացրած հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 65-րդ կետի 1)-ին և 3)-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց

երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Հրավերի 2.3 կետի 1-ին ենթակետի համաձայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագրերը:

Հրավերի 2-րդ մասի 2.2.3 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն մասնագիտական փորձառության մասին՝

1) (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է նույն կետի պահանջին բավարարող:

2) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագրերը: Հրավերով

սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

Հրավերի 8.1.4 կետով սահմանվել է, որ հայտերի գնահատումը և հաղթողների որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների/եթե ընթացակարգն ունի մեկից ավելի չափաբաժիններ/:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մերժելով, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից որպես նախկինում կատարված վերնաշապիկների և կոստյումների մատակարարման պայմանագիրը (կամ պայմանագրերը) չեն համապատասխանում Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջներին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով, որ որ «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է հանդերձանքի մատակարարում, որի ընդհանուր արժեքը կազմել է 7.002.000 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի հիմքերում առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն

մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Աշոտ Ազատի Ազիզյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10810-17 գրությամբ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ